Արմավիրի մարզի Գետաշենի միջնակարգ դպրոցի

անգլերենի ուսուցչուհի Մեհրի Հարությունյան

Խմբակի ծրագիր

<<Լեզվաբանական ակումբ>>

,, Linguistic club”

Linguistic Club

Խմբակի ծրագիր

<<Լեզվաբանական ակումբ>>/ ,,Linguistic Club”

Կրթական աստիճանը՝ միջնակարգ (երրորդ աստիճան)

Սովորողների տարիքային խումբը՝ 16-17 տարեկան

Դասարանը՝ 10-րդ դասարան

Ժամաքանակը՝շաբաթական 2 դասաժամ

Բացատրագիր

<<Լեզվաբանական ակումբ>>-ը արտադասարանական խմբակ է,որի գործունեության կարևորությունը ներկայիս բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում շատ մեծ է:Խմբակի գործունեությունը բխում է դպրոցի կարիքներից և պահանջմունքներից,ինչպես նաև աշակերտների մոտ տարբեր բնագավառներից համապատասխան բառապաշարի ,հաղորդակցման տեխնիկայի և մասնագիտական կողմնորոշման անհրաժեշտությունից:Այն միտված է սովորողի մոտ ձևավորել և զարգացնել լեզվական գրագիտություն և կարողունակություն,սովորել սովորելու կարողունակություն,մշակութային կարողունակություն,որոնք համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշիչով տվյալ կրթական աստիճանի համար սահմանված վերջնարդյունքներից բխող կարողունակություններին:

Նպատակները

1.Ներկայացնել սովորողին օտար լեզվի ,մասնավորապես անգլերենի, իմացության ,ազատ հաղորդակցման կարևորությունը մասնագիտական կողմնորոշման մեջ,

2.Ձևավորել բազմամշակույթ աշխարհում հաղորդակցվելու և գործելու ունակ անձ ,

3.Զարգացնել ԼԻԵՇ-ի առնվազն B1 կամ B2 մակարդակի օտար լեզվով հաղորդակցվելու կարողություն,

4.Զարգացնել ընդարձակ զեկուցումներ ,դասախոսություններ և փաստարկներ հասկանալու կարողություն,

4.Նպաստել սովորողի մոտ լեզուն կրողների հետ սահուն գրավոր և բանավոր հաղորդակցվելու կարողության զարգացմանը,

5.Արժևորել իր մշակույթը այլ լեզվով ներկայացնելու կարողությունը:

Վերջնարդյունքները

Խմբակի անդամները կկարողանան՝

1.Լսել և հասկանալ տարբեր թեմաներով լեզվակիրների գրական խոսքի հիմնական բովանդակությունը,խոսողի տեսակետը ,վերաբերմունքը,

2.Կարդալ ,հասկանալ տարբեր ժանրերի,այդ թվում նաև գրական ժանրի տեքստերի,բովանդակությունը ,դեպքերի զարգացումը,փաստարկները՝ճանաչելով հեղինակի դիրքորոշումը,

3.Հստակ և մանրամասն ներկացնել իր կարծիքն ու դիրքորոշումը արդի թեմաների վերաբերյալ,

4.Հանպատրաստի և սահուն հաղորդակցվել տարբեր իրավիճակներում գործածելով համապատասխան լեզնվական գործիքներ,

5.Կիրառել տվյալ մակարդակին ,թեմային ,հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք:

Ակնկալվող վերջնարդյունքները համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված հանրակրթական միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների՝ Մ2,Մ16,Մ24,Մ25,Մ39,Մ46 կետերին:

Բովանդակություն

Խմբակի ծրագիրն իր մեջ ներառում է համապատասխան թեմայի վերաբերյալ բառապաշար,քերականություն,երկխոսություններ,տեսագրությունների դիտում,թեմատիկ ձայնագրությունների ունկնդրում:Խմբակի դասընթացների ընթացքում սովորողները կուսումնասիրեն նաև ամերիկացի գրող Մարկ Տվենի կյանքը ,կենսագրությունը և ստեղծագործությունները,կկատարեն ընտրած ստեղծագործության ընթերցում և քննարկում:<<Առողջ սնունդ և ապրելակերպ>> թեմայի ուսումնասիրությունից հետո խմբակի անդամները հանդես կգան զեկուցումներով :

Պահանջվող նյութատեխնիկական բազա

Խմբակի դասընթացների կազմակերպման և արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ են համապատասխան գրքեր ,գրականություն ,համակարգիչներ , համացանցի առկայություն:Գետաշենի միջնակարգ դպրոցը ունի համապատասխան հնարավորություններով ստեղծագործարան,ռեզուրս կենտրոն ,որը հնարավություն է տալու խմբակի դասընթացները կազմակերպել ըստ նախատեսված պլանի :

Օգտագործված գրականության ցանկ,հղումներ

https://www.interlangues.ch/wp-content/uploads/2020/10/englishfile_4e_intermediate_teachers_guide.pdf

https://www.scribd.com/document/488782464/docdownloader-com-pdf-new-english-file-upper-intermediate-teacher-s-book-pdfpdf-dd-823fc936aefb7372db3e0699a96be2e9-pdf

https://en.wikipedia.org/wiki/The_Adventures_of_Tom_Sawyer

https://en.wikipedia.org/wiki/Mark_Twain

https://www.healthline.com/health/fitness-nutrition/healthy-lifestyle-benefits

https://www.safefood.net/heathy-food/what-it-means

Խմբակի Ծրագրի թեմատիկ պլանավորում

Կիսամյակային,առաջին կիսամյակ,

2023-2024 ուստարի

15 շաբաթ,շաբաթական 2 ժամ,ընդհանուր 30 ժամ

	Բովանդակություն	Նպատակ	Ժամաքանակ	Նշումներ	
1	Անհատականություն և զգացողություններ	1.Ներնմուծել Անհատականություն և Զգացողությունները թեմայի բառապաշար,համապատասխան քերականական կանոններ(Բառակազմություն, ժխտական նախածանցներ) 2.Զարգացնել սովորողի մոտ թեմայի վերաբերյալ նկարագրությունները և երկխոսությունները կատարելու տեխնիկա 3.Ձևավորել սովորողի մոտ հանդուրժողականություն և փոխադարձ հարգանք	4	1.Կատարել տեքստերի ընթերցում,երկխոսությունները,անձի բնութագրում 2. Առանձնացնել և խմբավորել դրական և բացասական առանձնահատկությունները 3.Դիտել տեսանյութ և կատարել քննարկում	
2	Կրթություն և աշխատանք, մասնագիտություններ	1.Ուսուցանել թեմայի վերաբերյալ համապատասխան	5	1.Կատարել դերախաղեր, Հարցազրույցներ 2.Գրել դիմում –հայտեր որևէ աշխատանքի դիմելու համար 3.Սովորողի ընտրությամբ	

		բառապաշար,քերականական կանոններ (Գոյականակերտ վերջածանցներ) 2.Ծանոթացնել աշխատանքի դիմելու կարգին և ձևերին 3.Զարգացնել սովորողի մոտ աշխատանքային բնագավառում հաղորդակցվելու,տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողունակություն 4.Ձևավորել աշխատանքի դիմելու,հարցազրույցներին մասնակցելու մշակույթ		կատարել այցելություններ աշխատավայրեր ,փորձի փոխանակման նպատակով 3.Լսել հարցազրույցների օրինակներ լեզուն կրողներից,	
3	Բիզնեսի կառավարում և գումար	1.Ծանոթացնել բիզնես բնագավառի բառապաշարին և արտահայտություններին 2.Զարգացնել համապատասխան թեմայի շուրջ զրույցները ,տեքստերը հասկանալու կարողունակություն 3.Ձևավորել համապատասխ	6	1.Թեմային համապատասխան տեքստերի թնթերցում ,քննարկումներ 2.Վարել երկխոսություններ թմայի վերաբերյալ 3.Կատարել խմբային աշխատանք ,որի արդյունքում սովորողները պաստառի կամ տեսագության միջոցում կներկայացնեն որևէ միջոցառման կազմակերպում կամ ապրանքի գովազդ:	

		ան վերաբերմունք բիզնես բնագավառում հաղորդակցվելու և որոշումներ կայացնելու համար			
4	Մեդիագրագիություն	1.Հաղորդել թեմայի վերաբերյալ համապատասխան բառապաշար 2.Ներկայացնել ակտուալ տեղեկատվության կարևորությունը և սոցցանցերից ճիշտ օգտվելու կարողությունը 3.Զարգացնել թեմային համապատասխան տեքստերը ,զրույցները ,հոդվածները հասկանալու և ըմբռնելու կարողություն	5	1.Կատարել թերթի հոդվածների ընթերցում և քննարկում 2.Կատարել խմբային աշխատանք ,որի արդյունքում սովորողները հոդվածի կամ տեսագրության տեսքով կներկայացնեն որևէ հրատապ կամ ակտուալ տեղեկատվություն:	
5	Կինո և գրքեր	1.Ներմուցել թեմայի վերաբերյալ համապատասխան բառապաշար և արտահայտություններ, 2.Զարգացնել սովորողի մոտ տարբեր ժանրերի ստեղծագործութ	3	1.Թեման ուսումնասիրելու ժամանակ կատարել որևէ ժանրի ֆիլմի դիտում և քննարկում, 2.Ընթերցել գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններից հատվածներ և կատարել քննարկումներ	

		յունները և ֆիլմերը հասկանալու և ըմբռնելու կարողություն 3.Նպաստել սովորողի մոտ համապատասխան թեմայի շուրջ բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը			
6	Մարկ Տվենի կյանքը, սեղծագործությունները	1.Ծանոթացնել ամերիկացի գրողի կենսագրության ը և ստեղծագործությունեերին 2.Զարգացնել գրական ժանրի ստեղծագործությունները կարդալու , հասկանալու կարողություն 3.Ձևավորել հարգալից վերաբերմունք այլ մշակույթի և նրա գրական ժառանգությա նկատմամբ,	3	1.Բանավոր ներկայացնել գրողի կենսագրության մանրամասները 2.Հանձնարարել ընթերցել սովորողի կողմից ընտրված որևէ ստեղծագործություն հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները 3.Կատարել քննարկում ընթերցված գրքի բովանդակության շուրջ	
7	Առողջ սնունդ և առողջ ապրելակերպ	1.Ներմուծել թեմայի վերաբերյալ համապատասխան բառապաշար և արտահայտչամ իջոցներ 2.Զարգացնել	4	1.Կատարել թեմային համապատասխան տեսագությունների դիտում , քննարկումներ, 2.Կատարել խմբային աշխատանք 3.Թեմայի ավարտին սովորողները հանդես կգան համապատախան	

		թեմայի վերաբերյալ ընդարձակ տեքստերը կարդալու և ըմբռնելու կարողություն 3.Ներկայացնել առողջ ապրելակերպ վարելու ուղիները և կարևորությունը 4.Նպաստել սովորողի մոտ թեմայի շուրջ ազատ ու անկաշկանդ բանավոր խոսք կառուցելու կարողությանը		զեկուցումով և կնշեն թեմայի կարևորությունը և իրենց կարծիքը առողջ սննդի և ապրելակերպի վերաբերյալ 4.Սովորողի ընտրությամբ զեկուցումը կարող լինել սահիկահանդեսի տեսքով	